ներուն մեջ[2]։ Ավելի վերջը Փարիզեն բերել տված նոր մեքենաներով արդիական տպարան մը հիմնեց Ղալաթիո ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին ճիշտ դիմացը քարաշեն շենքի մը մեջ (1856)։ Այս նոր մեքենաներով տպեց Միհրան Տյուզ պեյի կողմե հղացված քոնսոլիտներու (պետական փոխառության պարտատոմսերի) 26 մայիս 1856 թ., 1000-նոց և 100-նոց արժեթուղթերը («Թահվիլաթը մյումթազե»), 1857 թ., մաքսատան տնօրեն Մկրտիչ Ճեզայիրլեան էֆենտիի կողմե հանձնարարված պետական պաշտոնաթուղթերն ու աղյուսակները։ Երբ կառավարությունը նոր որոշմագիրով մը թղթադրամները շրջանառութենե հավաքեց, հատկապես այդպիսի գործերու համար բերված մեքենաներն ու կազմածները այլևս պիտանի չեղան, մեծ պարտքերու մեջ մխրճված Մյուհենտիսյանը ստիպված եղավ փակել իր տպարանը։ Այս դեպքեն վերջ ան դիմեց նշանավոր գեղագիր և Ռումելիի գլխավոր դատավոր Մուսթաֆա Իզզեթ էֆենտիին (1801—1876) և, անկե «նեսիհ» գիրերու օրինակներ առնելով, փորագրեց անոնց «արական» կաղապարները։

Այսպիսով, օսմանյան ժամանակաշրջանի տպագրության բնագավառին մեջ գործածված տառերն ալ սուլթան Ազիզի օրով գտան իրենց վերջնական ձևերը։

Մյուհենտիսյանի ձուլած կաղապարները օգտագործվեցան մինչև լատինական տառերու ընդունման տարիները։ Մյուհենտիսյանն իր ստեղծած «նեսիհ» տիպի տառերով տպագրեց թուրքերեն լեզվով բանաստեղծություններու ժողովածու մը և ներկայացուց ժամանակի պետական ավագանիներեն ոմանց։ Եպարքոսը եղելությունը բարձր գրնահատեց և Մյուհենտիսյանին ըսավ. «Դուք հոյակապ հիշատակ մը նվիրեցիք, ազգովին պետք է ձեզ շնորհակալ ըլլանք»։

Հովհաննես Մյուհենտիսյանը նոր ձուլարան մը հիմնեց Գատըրգյուղի իր տան պարտեզին մեջ և հորինած տառերու կաղապարներով պատրաստեց նաև «Վարաքայի Սահիհե» (Վավերացված դրոշմանիշներ) կոչված դրոշմաթուղթերու կաղապարները։ Այս կաղապարները կը նսեմացնեին այդ ժամանակաշրջանին Եվրոպայի մեջ պատրաստված կաղապարները։ Մյուհենտիսյանը 76 տարեկանին փորագրեց 16 համարի «նեսիհ» տիպի (1886) 79 տարեկանին 6 համարի «նեսիհ» տիպի (1889) և 81 տարեկանին ալ, այսինքն իր մահեն քանի մը օր առաջ, ձեռագրատիպ 24 համարի տառերու պողպատյա «արական» կաղապար-

[2] Başbakanlik Arşivi (Վարչապետարանի Արխիվ), Ներքին գործերու հրամանագիրներ, 4623, 30 հոկտեմբեր, 1844։